

Հայկական մշակույթի շաբաթ Շտուտգարտում

Սեպտեմբերի 16-ին ԳԳՀ Շտուտգարտ քաղաքում բացվեց հայկական մշակույթի շաբաթ՝ նվիրված ՀՀ և ԼՂՀ անկախության 20-ամյա տարելիցներին: Շաբաթի բացման հանդիսավոր արարողությանը ողջույնի խոսքով հանդես եկավ ԳԳՀ-ում ՀՀ դեսպան Արմեն Մարտիրոսյանը: Միջոցառմանը ներկա էին հայ համայնքի և Շտուտգարտի տեղական իշխանությունների և հասարակության ներկայացուցիչներ: Միջոցառման հանդիսավոր մասին հետևեց համերգ՝ վաստակաշատ հայ կոմպոզիտոր Ռոբերտ Ամիրխանյանի և մենակատար Սեդա Սարգսյանի մասնակցությամբ:

Մշակութային շաբաթի դեռևս նախապատրաստական փուլում, ԳԳՀ-ում Ադրբեջանի դեսպանությունը, Շտուտգարտում Ադրբեջանի պատվավոր հյուպատոսը և ադրբեջանական համայնքը բոլոր ջանքերը գործադրեցին միջոցառման ձախողման համար: Մասնավորապես, քայլեր էին ձեռնարկվում սեպտեմբերի 19-ին ԼՂՀ անկախության 20-ամյակին նվիրված միջոցառման անցկացման դեմ: ՀՀ դեսպանության, ԳԳՀ-ում ԼՂՀ ներկայացուցչության և Շտուտգարտի հայ համայնքի ձեռնարկած համատեղ քայլերի շնորհիվ, սեպտեմբերի 19-ին, ինչպես և նախատեսվում էր ծրագրով, Շտուտգարտի քաղաքապետարանի կողմից տրամադրված դահլիճում տեղի ունեցավ ԼՂՀ անկախության 20-ամյակին նվիրված հանդիսավոր երեկո, որին ելույթով հանդես եկավ Գերմանիայում ԼՂՀ ներկայացուցիչ Հարություն Գրիգորյանը: Երեկոն ավարտվեց մշակութային ծրագրով:

: